

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻՆԻ ՇԱՀՈՒԹԱՐԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

Դ. Ժ. ԶԶԱՆԴԻՐՅԱՆ

Առևտրային բանկի գործունեության շահութաբերության վերլուծության ներառում է.

— բանկի գործունեության շահութաբերությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկը ամբողջությամբ վերցրած:

— եկամուտների և ծախսերի կառուցվածքի որակական և քանակական վերլուծությունը:

— բանկի առանձին գործառնությունների շահութաբերության վերլուծությունը:

Բանկի գործունեության շահութաբերությունը հաշվարկելիս կիրառվում է հիմնականում երկու ցուցանիշ.

1. շահույթի հարաբերությունը բանկի ակտիվներին,

2. շահույթի հարաբերությունը բանկի կանոնադրական կապիտալին (հիմնադրամին):

Ներքոհիշյալ 1-ին և 2-րդ աղյուսակներում թերված են ՀՀ այն առևտրային բանկերի շահութաբերության ցուցանիշները, որոնք 1997 թվականի 1-ին հոկտեմբերին աշխատել են շահույթով:

Աղյուսակ 1

ՀՀ առևտրային բանկերի շահութաբերության ցուցանիշների ակտիվները

համեմատությամբ 01, 04, 1997 թ. դրությամբ

ՀՀ Բանկերը	Ակտիվները (մլն. դրամ)	Շահույթը (մլն. դրամ)	K շահ. ըստ ակտիվի, %
1. Հայնարաբանկ	20740.6	11.010	0.053
2. Հայագրորանկ	6239.2	47.009	0.754
3. Անելիք բանկ	3342.5	3.814	0.114
4. Գյուղփոխօգնության բանկ	1054.2	52.340	4.965
5. Լենդ բանկ	1259.6	8.010	0.636
6. Կոնվերսբանկ	1645.2	75.320	4.578
7. Միավորված բանկ	894.4	8.798	0.984
8. Հայկավեստբանկ	654.1	1.603	0.245
9. Շիրակինվեստ	722.1	3.343	0.463
10. Դավիթ-բանկ	721.5	2.120	0.294
11. Ինկո-բանկ	488.6	4.127	0.845
12. Գլաձոր բանկ	311.8	10.997	3.527
13. Տրաստբանկ	566.7	19.350	3.415
14. Կրեդիտ-Սերվիս բանկ	334.3	2.606	0.804
15. Պրոմեթևս	374.5	8.580	2.291
16. Ակունք բանկ	347.2	1.540	0.444
17. Մենատեյ-նրևան	455.9	1.006	0.221

1997 թ. առաջին հոկտեմբերին համակարգի ստացված շահույթը կազմել է 261.653 մլն. դրամ:

* Աղյուսակները հաշվարկվել և կազմվել են հեղինակի կողմից, տվյալները վերցված են Հայաստանի Գանկերի Ասոցիացիայի «Ֆինանսների և բանկեր» թերթի հատուկ թողարկման համարից, մայիս 1997 թ., «Банки Армении»:

ՀՀ առևտրային բանկերի շահութաբերության ցուցանիշները կանոնադրական հիմնադրամի ձամեմատությամբ 01. 01. 1997 թ. դրությամբ

ՀՀ բանկերը	կանոնադրական հիմնադրամ (մլն. դրամ)	Շահույթը (մլն. դրամ)	Կշառ. կան. հիմն. նկատմամբ %
1. Հայնեբարտբանկ	657.6	11.010	1.674
2. Հայագործբանկ	96.2	47.009	15.871
3. Անելիք բանկ	130.4	3.814	2.114
4. Գյուղփոխօգնության բանկ	167.2	52.340	31.304
5. Լենդ բանկ	120.0	8.010	6.675
6. Կոնվերսբանկ	50.0	75.320	150.64
7. Միավորված բանկ	214.8	8.798	4.096
8. Հայինվեստբանկ	142.3	1.003	1.127
9. Շիրակինվեստ	144.4	3.343	2.315
10. Դավիթ-բանկ	120.0	2.120	1.767
11. Ինկո-բանկ	69.4	4.127	5.947
12. Գլաձոր բանկ	86.1	10.997	12.772
13. Տրաստբանկ	149.7	19.350	12.926
14. Կոնդիտ-Սերվիս բանկ	144.1	2.686	1.864
15. Պրոմբեֆես	138.3	8.581	6.204
16. Ակունք բանկ	145.6	1.540	1.058
17. Մենատեպ-Երևան	50.0	1.006	2.012

Ինչպես վկայում են վերոհիշյալ աղյուսակների տվյալները, ՀՀ առևտրական բանկերից ամենաբարձր շահութաբերության ցուցանիշն ըստ ակտիվների ունեն Գյուղփոխօգնության բանկը և Կոնվերսբանկը, այնուհետև Գլաձոր բանկը և Տրաստ բանկը, իսկ ըստ կանոնադրական հիմնադրամի ամենաբարձր շահութաբերության ցուցանիշ ունի Կոնվերսբանկը, այնուհետև Գյուղփոխօգնության և Հայագործ բանկերը, որոնց հետևում են դարձյալ Տրաստ բանկը և Գլաձոր բանկը:

Վերոհիշյալ բանկերում շահութաբերության ցուցանիշները գերազանցում են նաև ՈՒԴ առևտրային բանկերի ցուցանիշները:

Արտասահմանյան լուծակները ևս այդ ցուցանիշների գծով ցուցաբերում են ավելի ցածր մակարդակ, այսպես օրինակ, Ամերիկյան «Signet» բանկային կորպորացիայի 1990 թ. տարեկան հաշվետվության տվյալների համաձայն, ակտիվների շահութաբերությունը կազմել է 0.34 %, իսկ բաժնետիրական կապիտալի շահութաբերությունը՝ 5.43 %: Աշխարհի 200 խոշորագույն բանկերում 1991 թ. ակտիվների շահութաբերությունը կազմել է 0.04-ից մինչև 1.76 %, իսկ բաժնետիրական կապիտալի շահութաբերությունը՝ 0.63-ից 35 %:

Այժմ ուսումնասիրենք բանկերի շահութաբերության լ. գնահատականը միաժամանակ, ըստ Կշառ. ըստ ակտիվների և Կշառ. ըստ կանոնադրական հիմնադրամի ցուցանիշների գծով: Ներքոհիշյալ 3-րդ աղյուսակում բերված են ՀՀ առաջավոր ցուցանիշներ ունեցող առևտրային բանկերը ըստ Կշառ. և կանոնադրական ըստ ակտիվների և Կշառ. շահութաբերության ըստ կանոնադրական հիմնադրամի ցուցանիշների նշանակության, հաջորդականորեն՝ ամենաբարձրից դեպի ցածր:

Ինչպես երևում է 3-րդ աղյուսակից, ակտիվների շահութաբերության բարձր նշանակությունը դեռևս չի նշանակում բանկի կապիտալի բարձր շահութաբերություն, քանի որ ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը քննվողներում է բանկի տրամադրության տակ եղած բոլոր ռեսուրս-

ների օգտագործման արդյունավետությունը, իսկ կապիտալի շահութաբերության ցուցանիշը բնութագրում է մասնակից-բաժնետերերի հստակ կապիտալի եկամտաբերության աստիճանը: Տնտեսագիտական գրականության մեջ հաստատվում է այն փաստը, որ որպես բանկային գործունեության ընդհանրացվող ցուցանիշ պետք է դիտել կապիտալին ընկնող շահույթի, նորման, այսինքն, K շահ. կան. հիմնադր., իսկ ըստ ակտիվների շահութաբերության՝ K շահ. ըստ. ակտիվն. ցուցանիշն առաջարկվում է դիտել որպես մասնավոր (մասնակի) ցուցանիշ, որը բնութագրում է բանկի ներքին քաղաքականությունը, նրա ապարատի պրոֆեսիոնալիզմը, որը պահպանում է ակտիվների և պասիվների օպտիմալ կառուցվածքը եկամուտների ու ծախսերի տեսանկյունից: Արտասահմանյան բանկերը, հայտնի է, որ յուրեւեւ հաշվետվությունների հրատարակման մեջ, որն առաջին հերթին նախատեսված է բանկերի գոյությունն իրենց ու պոտենցիալ բաժնետերերի և հաճախորդների համար, բերում են ներկու ցուցանիշների նշանակություններն էլ, հավանաբար, դրանք հավասարաչափ կերպով կարևոր համարելով բանկի գործունեության արդյունքների գնահատման համար:

Աղյուսակ 3

Ըստ K շահ. ըստ ակտիվների	Ըստ K շահ. ըստ կանոնադրական հիմնադրամի
Գյուղատնտեսության բանկ	Կոնվերս բանկ
Կոնվերս բանկ	Գյուղատնտեսության բանկ
Գլաձոր բանկ	Հայագործական
Տրապարանկ	Տրապարանկ
Պրոմբանկ	Գլաձոր բանկ

Բանկի շահութաբերության վերլուծության հաջորդ փուլն է նրա եկամուտների և ծախսերի կառուցվածքի որակական և քանակական վերլուծությունը:

Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքի ամփոփ որակական վերլուծությունը կատարվում է եկամուտների և ծախսերի վերաբերյալ, ինչպես նաև շահույթի բաշխման մասին հաշվետվությունների տվյալների հիման վրա:

Այսպես, օրինակ, «Կոնվերս», «Հայագյուղատնտեսության», «Կրեդիտ Երևան» և «Շիրակի միաստ» բանկերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություններից երևում է, որ 1997 թ. նրա եկամուտներում ներառվել են վարկերից և դեպոզիտներից ստացված տոկոսները, ստացված միջնորդավճարները, արտարժույթային գործառնություններից և արժեթղթերի գործառնություններից ստացված եկամուտները, ինչպես նաև այլ եկամուտներ: Նրա այլ ծախսերի մեջ ներառվել են վճարված տոկոսները, վճարված միջնորդավճարները, ծախսերը արտարժույթային և արժեթղթերի գործառնությունների գծով, ծախսերի վարկի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի գծով, կառավարչական ապարատի պահպանման ծախսերը, վճարված տույժերը և տուգանքները, ինչպես նաև այլ ծախսերը:

Եթե ամփոփելու լինենք վերոհիշյալ 4 բանկերի եկամուտների ու ծախսերի ըստ խոշորացված հոգվածների կառուցվածքը, կստանանք հետևյալ պատկերը:

Ինչպես վկայում են աղյուսակում վերլուծված տվյալները, «Կոնվերս» և «Գյուղատնտեսության» բանկերի եկամուտների կառուցվածքում գերակշռող տեղ են զբաղեցնում արտարժույթային գործառնություններից ստաց-

ված եկամուտները (Աղյուսակը՝ կազմված է եկամուտների և ծախսերի վերաբերյալ վերահիշյալ առևտրային բանկերի հաշվետվությունների տվյալների հիման վրա համապատասխանաբար՝ 71,24 և 75,43 %, «Կրեդիտ-Երևան» և «Շիրակ-Ինվեստ» բանկերի եկամուտներում ստացված տոկոսները (համապատասխանաբար՝ 36,35 և 63,73 %)։

Աղյուսակ 4

«Կոնվերս», «Հայգյուղփոխօգնության», «Կրեդիտ-Երևան» և «Շիրակ-Ինվեստ» բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը ըստ խոշորացված հոգվածների՝ 01. 04. 97 թ. դրությամբ (տոկոսներով ընդհանուր նկատմամբ)

	Կոնվերս բանկ	Հայգյուղ- փոխօգնության բանկ	Կրեդիտ- Երևան	Շիրակ ինվեստ
Եկամուտների հոգվածներ				
Ստացված տոկոսները	11.6	16.53	36.35	63.73
Եկամուտներ արտարժույթային գործառնություններից	71.24	74.43	21.73	5.07
Եկամուտներ արժեժգիծություններից	1.16	0.37	3.73	0.01
Մատուցված ծառայությունների դիմաց ստացված գումարներ	10.38	0.07	21.35	3.29
Այլ եկամուտներ	5.18	7.61	16.84	22.90
Ծախսերի հոգվածներ				
Վճարված տոկոսները	21.83	0.32	20.89	13.50
Ծախսեր արտարժույթային գործառնություններից	40.13	0.37	25.10	3.93
Ծախսեր արժեժգիծություններից	—	0.03	0.51	—
Մասհանձնների վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի	15.40	9.56	2.74	37.4
Կառավարչական ապահովման ծախսեր	21.34	73.92	37.20	31.53
Այլ ծախսեր	1.28	15.80	13.56	5.55

Ծախսերի կառուցվածքում պատկերը հետևյալն է. «Կոնվերս» բանկի գծով նշանակալի տեսակարար կշիռն ընկնում է արտարժույթային գործառնությունների գծով ծախսերին՝ 40,13 %, «Հայգյուղփոխօգնության» և «Կրեդիտ-Երևան» բանկերի գծով՝ կառավարչական ապահովման ծախսերին (համապատասխանաբար՝ 73,92 և 37,20 %), իսկ «Շիրակ-Ինվեստ»-ին՝ 3,93 %։ Վերջինիս հնարավոր կորուստների պահուստաֆոնդին կատարված մասհանձնումներին՝ 37,44 %։ Իհարկե, վերջին բանկի ծախսերի կառուցվածքում փոքր չէ նաև կառավարչական ապահովման պահպանման ծախսերի տեսակարար կշիռը, այն կազմում է 34,58 %։

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքի ավելի մանրամասն և խորը վերլուծության նպատակով անհրաժեշտ է կիրառել վերլուծական (անալիտիկ) հաշվառման և ներբանկային փաստաթղթերի

տվյալները, որոնք հնարավորություն կտան եկամուտների կառուցվածքում որոշելու գործառնական և այլ եկամուտների տեսակարար կշիռները: Ընդ որում, հնարավորությունը կարող է նաև մասնատված լինել ըստ վարկերի ժամկետների, որոնց գծով ստացվել կամ մոծվել են տոկոսները, ըստ հաճախորդների առանձին կատեգորիաների և այլն:

Բանկերի շահութարեւության վերլուծության ժամանակ կարևորագույն հարցերից է նաև միջին եկամտադրժան մարժադի որոշումը, որը ակտիվային գործառնությունների լիարժեք միջին տոկոսադրույթի գերազանցումն է՝ պասիվային գործառնությունների գծով ունեցած միջին տոկոսադրույթից:

1995—1997 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում սղաճի դսպման պայմաններում տեղաբաշխված միջոցների տոկոսադրույթների՝ ներդրված միջոցների տոկոսադրույթների համեմատ, առաջանցիկ նվազման արդյունքում նվազել է տոկոսային տարբերությունը (մարժան), որը օրյակտիվորեն բերել է հանրապետության բանկային համակարգի ընդհանուր շահութարեւության անկման: Եթե 1995 թ. տարեսկզբից մինչև դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում բանկային համակարգում ներդրված միջոցների միջին տոկոսադրույթը կազմել է 52.3 %, իսկ վարկերինը՝ 104.2 % (տոկոսային մարժան կազմել է 51.9 %), ապա 1996 թ. նույն ժամանակահատվածում այն կազմել է համապատասխանաբար 38.1 % և 62.7 % (տոկոսային մարժան՝ 24.6 %): Տոկոսային տարբերության նրվազման բացասական ազդեցությունից թերևս կարելի էր խուսափել, եթե առես.բային բանկերը միջոցներ ներգրավեին և տեղաբաշխեին սահող տոկոսադրույթներով, որը սակայն կապված է դժվարությունների հետ, քանի որ միջրանկային շուկան նոր է ձևավորվում:

ВОПРОСЫ АНАЛИЗА РЕНТАБЕЛЬНОСТИ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ РА

Д. Ж. ДЖАНГИРЯН

Р е з ю м е

В статье рассматриваются те коммерческие банки РА, которые в период 1997 г. работали прибыльно, при этом использовались два показателя рентабельности: соотношение прибыли к активам банка и соотношение прибыли к учредительскому капиталу. По этим двум показателям в РА первостепенную роль имеют следующие коммерческие банки: Конверс, Армагробанк, Банк Сельхозвзаимопомощи, Трастбанк, Гладзор и Прометей. Рассматривались также структура доходов и расходов банков, произведен их количественный анализ. В структуре доходов коммерческих банков наибольший удельный вес имеют полученные проценты от кредитов и депозитов, полученные коммиссионные вознаграждения, доходы от валютных операций и от операций с ценными бумагами, а в структуре расходов — выплачиваемые проценты, посреднические выплаты, расходы на валютные операции и на операции с ценными бумагами, выплаты на резервный фонд от возможных потерь кредитов, расходы на сохранение аппарата, выплаченные пенни и штрафы.